



## ՆՈՐ ՏԱՐԻ



նծո՞ւթյան, անհո՞ւն երջանկու-  
թյան նոր տարին:

Վերջապես եկավ նա, ազա-  
տագենշ ժողովրդների ակնկա-  
լած խաղաղության նոր տարին:

Երկարատե մղձավանջային տարիներից  
հետո՝ Աստուծո ղողորմածությամբ այսօր  
ամբողջ աշխարհի ժողովրդները նոր տա-  
րին դիմավորում են խաղաղ շինարարու-  
թյան, ստեղծագործ աշխատանքի պայման-  
ներում:

Երկրորդ համաշխարհային պատերազմից  
հետո առաջին անգամ մարդիկ նոր տարին  
թեկնադրում են ոչ թե ռազմի շունչալից  
դաշտերում, խրամատներում, ավերակների  
փլատակների ու մոխրակույտերի վրա, թեժ  
մարտերի հրանոթների խլացուցիչ որոտի,  
երկինքը ծխախող երկաթե բազանների մա-  
հաբույժ ճիւղերի, գետինը դրդաշնող ուռ-  
բերի տարափի և թանձր ծխով պարտւրված  
գյուղերի ու քաղաքների ամենակույ հըր-  
դեհների երկինքը լիզող բոցերի լույսի  
տակ, այլ խաղաղ աշխատանքի հզոր սիմ-  
ֆոնիայի հոգեպարար հնչյունների տակ:  
Փառք Աստուծոն, աշխարհի բոլոր անկյուն-  
ներում՝ զենիտային հրանոթների փողերի  
փոխարեն, այսօր միլիոնավոր ձեռքերում  
դեպի վեր են բարձրանում կենաց բաժակ-  
ները նվիրված այս խնդալից նոր տարվան:

1945 թվականը պատմությանը գիրկն ան-  
ցավ ընդմիջտ, որպես խոշոր հաղթանակ-  
ների և նշանակալից իրադարձությունների  
տարի: 1945 թիվը պատմության ոսկե էջե-  
րը կզարդարի և սերունդների հիշողության  
մեջ կմնա որպես Հայրենական Մեծ պա-  
տերազմի հաղթական ավարտի տարի, որ-  
պես ֆաշիստական վանդալների, նկատ-  
մամբ առաջավոր, մարդկության պրոգրեսիվ  
ուժերի շահած խոշորագույն Հաղթանակի  
տարի:

Երկրորդ համաշխարհային պատերազմը  
որը իր վիթխարի չափերով գերազանցեց  
մինչև այժմ եղած բոլոր պատերազմներին  
և փրկ շրջապատույթի մեջ ներգրավեց բոլոր

աշխարհամասերն ու երկրագնդի ազգաբնակ-  
չության ամենաստվար հատվածները, մի-  
լիոնավոր բանակներ ջարժման մեջ դնելով  
ցամաքներում, ծովերում ու օդում, 1945  
թվին ավարտվեց ազատասեր ժողովուրդ-  
ների փրկիցիայի փառապանծ հաղթանա-  
կով: Հիմնովին ոչնչացվեցին պատերազմի  
երկու հիմնական օջախները՝ հիտլերյան  
Գերմանիան, և միլիտարիստական Ցապո-  
նիան: Դեմոկրատական ուժերի այդ հաղ-  
թանակը հնարավոր դարձավ շնորհիվ նյու-  
րան, որ ազատասեր ժողովուրդների մեծ  
դաշինքի հիմնական կորիզը հանդիսացան  
աշխարհի ամենահզոր երեք պետություն-  
ները՝ Սովետական Միությունը, Ամերիկա-  
յի Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտա-  
նիան:

Դժվար է նշել Կրապրճություններով ա-  
վելի հարուստ տարի, քան 1945 թիվը:  
Խնչպես կինո-էկրանի վրա, կատաղի մար-  
տերի ահեղ տեսարանները արագորեն փո-  
խարկվեցին հաղթանակի լուսապսակ օրերի  
և ապա ավելոված դյուղերի ու քաղաքների  
վերականգնման աշխատանքի տեսարան-  
ներին: Լոցիին ռազմի շեփոթները, ավարտ-  
վեց մեծագույն մարտերի շրջանը՝ և ամ-  
բողջ հասակով ծառացան խաղաղ զարգաց-  
ման՝ պատերազմի պատճառած խորը վեր-  
քերի բուժման, ժողովուրդների անկեղծ բա-  
րեկամության ու սերտ համագործակցու-  
թյան խնդիրները:

Սակայն ազատասեր ժողովուրդների  
համատեղ ջանքերն այսուհետև պետք է  
ուղղված լինեն խաղաղությունն ապահովե-  
լու կողմը: Աղոթում ենք Ամենաբարձրյա-  
լին, որպեսզի 1946 թիվը դառնա ազատա-  
սեր ժողովուրդների խաղաղ — բարեկամա-  
կան հարաբերությունների ամրապնդման  
տարի:

Զպետք է մոռանալ, որ Սովետական  
Միությունը իր վրա մերցրեց պայքարի  
հիմնական ծանրությունը և երկար ժամա-  
նակ մենակ մարտնչեց ընդդեմ ամենաու-  
ժեղ և ամենաավտանդավոր ոսոխի, իմպե-

բխալիստական գիշատիչ՝ հիտլերյան Գերմանիայի: Գերմանական հորդանքերը նվաճելով ընդարձակ դաշտերում պատահողմի պես կարճատև պար բռնելուց հետո, ուլկիանոսային խոլ ու հսկա ալիքների ուժգնությամբ ծառա ելան ու հորձանք ալիքի դեպի ռուսական լայնածավալ տափաստանները: Սակայն այստեղ հոխորտանքի մոլուցքով բռնված այդ ալիքները Մոսկվայի, Ստալինգրադի տակ հանդիպելով անխորտակելի ու հզոր պատեհի, զարնվեցին սովետական ժողովրդի գրանիտե կրճերի և փոշիանալով ուժասպառ ընկերկիցին, ինչպես ծովափի ժայռերին զարնվող գոռ ալիքները:

Այդ վիթխարի ու ահեղի դոտեմարտում մեծ եղան մեր զոհերը, սակայն դժվար էր ընկճել սովետական ժողովրդի ընդդիմության ոգին:

Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում նա դրսևորեց իր աննկուն կամքը և անխորտակ ուժը, թիկունքում ու ճակատում ցուցաբերելով մասսայական հերոսություն և սխրագործություն: Սովետական Միությունը հերոսական դրվագներ գրեց պատերազմի պատմության փառավոր էջերում և ամենալճական դերը խաղաց արևմուտքում ու արևելքում ամենամալազուկային իմպերիալիզմի ամբողջները խորտակելու և աշխարհի ժողովուրդների համար խաղաղություն անվճար գործում:

Նա դարձավ բոլոր ազատատենչ ժողովուրդների հույսն ու ապավենը: Սովետական ժողովրդի և նրա Կարմիր Բանակի անհողորդ կայունությունը, հերոսությունը, արիությունը աշխարհն ազատագրեցին նրան սպառնացող վերահաս ֆաշիստական ստրկության կապանքներից և փրկեցին մարդկության դարավոր կուլտուրան ոչնչացումից: Պակված հաղթության դափնիներով սովետական մարդիկ, խորհ հավատով և վստահ նվաճված երջանկության ու լուսապայծառ ապագայի նկատմամբ, այսօր մի առանձին ցնծությամբ են թևակոխում այս կենսախնդ նոր տարին:

Հայրենասիրական հպարտությամբ ու երջանկությամբ նրանք մի հետադարձ հայացք են նետում իրենց անցած փառահեղ ուղու վրա, տեսնելով թե ինչպես հեռանում է պատմական անդուլական հաղթանակի տարին, մեր Մեծ Հայրենիքի համաշխարհային մշտափայլ փառքի տարին, Հայրենական Մեծ պատերազմի արդար և սուրբ գործի հաղթանակի տարին: Հավիտենականության գիրկը նետվող 1945 տարին սկսվեց Հայրենական պատե-

րազմի վճռական մարտերի որոտների տակ: Կոմիներ էին տեղի ունենում Չխուսովականում: Բուդապեշտի փողոցներում ծավալվել էին կատաղի դոտեմարտերը:

Կարմիր Բանակը վճռական զրոհի էր նախապատրաստվում ֆաշիստական գազանի որջի վրա: Սովետական հրանոթները մեկը մյուսի հետևից խողտակում էին արևելյան Պրուսիայի, գերմանական ռազմամուկների այդ բնի ամրությունները: Անդրվիսլյան մատուցներում սեղմվում էր այն բոռնցքը, որը պիտի հունվարի կեսերին իջներ գերմանական զորքերի գլխին:

Այսպես սկսվեց 1945 թիվը. եկավ հունվարը և ծավալվեց սովետական զորքերի մեծ հաղթարշավը դեպի Գերմանիայի խորքերը: Կարմիր Բանակը ազատագրեց Լեհաստանը, Չխուսովական, մարտերով անցավ Հունգարիայի վրայով, մտավ Ավստրիա, ներխուժեց Պոմերանիա, գերմանական Սիլեզիա և հաղթանակի ալ դրոշը ծածանեց ծոնկի եկած Բեռլինի վրա: Ռադիո-ալիքների թևերի վրա դեպի աշխարհի բոլոր ծայրերը տարածվեցին Մեծ Առաջնորդ ՍՍԱԼԻՆԻ հաղթանակ ազդարարող անմոռաց խոսքերի հիասքանչ հնչյունները: Ճշաստվ Գերմանիայի վերջնական ջախջախման պատմական օրը, գերմանական իմպերիալիզմի նկատմամբ մեր ժողովրդի մեծ հաղթանակի օրը:

Չանցավ մի քանի ամիս և Կարմիր Բանակի ու մեր դաշնակիցների բանակների հզոր հարվածների տակ ծոնկի եկավ նաև Յուգոսլան ու այսպիսով վերջացավ երկրորդ համաշխարհային պատերազմը: Ռադիո ալիքների միջից նորից հնչեց Մեծ ՍՍԱԼԻՆԻ ձայնը. Ճշաստվ երկար սպասված խաղաղությունը ողջ աշխարհի ժողովուրդների համար:

Սովետական Միությունը պատերազմից ելավ ոչ միայն հաղթանակով, այլև ամրապնդված. աճեց նրա միջազգային հեղինակությունը: Այս մեծ և պատմության մեջ անօրինակ հաղթանակը նվաճվեց սովետական ժողովրդի նյութական և հոգեկան բոլոր ուժերի առաջնաբուն շարումով, ծանր պոհերի ու զրկանքների գնով: Ռուս մեծ ժողովուրդը իր շուրջը համախմբելով Միության բոլոր ժողովուրդներին կուրից այն անխորտակելի ուժը, որին զարնվելով փշրվեց գերմանա-ճապոնական իմպերիալիզմի ռազմական մեքենան: Սովետական կարգերը այս պատերազմում ցույց տվին իրենց լիակատար կենսունակությունը և երբ նորից սկսվեց խաղաղ, շինարար աշխատանքը, սովետական ժողովուրդը մեծ եռանդով

ձեռնամուխ եղավ երկրի վերականգնմանը: Փառք Արարչին նորից ծխացին վերականգնված դործարանների երկնահույս ծխանելու գնորդ, նորից զիլ երգեցին տրակտորները իրենց մշակողներին կարոտով սպասող դաշտերում: Մոխիրների, փրատակների կույտերի տակից նորից վեր խոյացան շեն ու բարեկեցիկ գյուղերն ու քաղաքները: Գեռ թարմ են մեր եղբայրների ու բույրերի, հայրերի ու մայրերի, սիրելիների ու բարեկամների շիրիմները. նրանք իրենց կյանքը չխնայեցին մեր արդար գործի հաղթանակի համար և այսօր, նոր տարվա գիշերը միխոնավոր սովետական մարդիկ նորից ու նորից կրկնում են Մեծ Առաջնորդի խոսքերը. «Հալածված փառք մեր հայրենիքի ազատության ու անկախության համար մղվող մարտերում զոհված հերոսներին»:

Սովետական առնական ժողովուրդը, զինված հարուստ փորձով, լի է վճռակա-նությամբ կարճ ժամանակամիջոցում բու-ժելու պատերազմի հասցրած վերքերը:

Հայ ժողովուրդը, որպես Սովետական Միության մեծ ընտանիքի մի անդամը, Հայ-րենական պատերազմի օրերին չխնայեց իր ուժերը և Միության եղբայրակից ժողո-վուրդների հետ միասին այդ մեծ պայքարի զոհասեղանի վրա դրեց իր արժանի լուծան, սրբագործելով այն իր լավագույն զավակների արյունով: Քառորդ միլիոնից ավելի հայ մարտիկները կռվում էին Կարմիր Բանակի շարքերում: Աշխարհի բոլոր ռազմաբեմե-րում հայ ժողովրդի սփյուռքում ցրված զա-վակները տասնյակ հազարներով դաշնակից բանակների շարքերում կողք-կողքի մար-տնչեցին հանուն խաղաղության, հա-նուն մարդկության երջանիկ, լուսապա-ծառ ապագայի: Նվթրապաշտ երկրը ներում հայ պարտիզանները աչքի ընկան իրենց հերոսական սխրագործություններով: Սփյուռքի ողջ հայությունը խորը դիտակ-ցելով, որ հայ ժողովրդի բախտը, նրա փր-ջանիկ ապագան միահյուսված է ազատա-սեր ժողովուրդների բախտին, անվերապահ կերպով կանգնեց նրանց դրոշի տակ և ու-շինչ լինայեց ֆաշիզմի ջախջախման ու ոչնչացման համար:

1945 թվում հայ ժողովրդի կյանքում նը-շանալի տարեթիվ հանդիսացավ նաև այն պատճառով, որ Սովետական Հայաստանը բոլորեց իր գոյության 25-ամյակը: Հայ պատմագրության մեջ նշանալիոր այդ տա-րեթիվը ողջ հայության կողմից տոնվեց մեծ խանդավառությամբ: Արևավառ Սովե-տական Հայաստանը իր գոյության 25

տարվա ընթացքում աճեց, զարգացավ և դարձավ Միության ծաղկափթիթ հանրա-պետություններից մեկը: Նրբեմնի բազմա-շարժար, տանջված ու հալածված հայ ժո-ղովուրդը այսօր Սովետական Հայաստա-նում ապրում է խաղաղ ու ապահով կյան-քի պայմաններում և շինարար ու ստեղծա-դործ աշխատանքի միջոցով շարունակում է կերտել իր երջանիկ լուսաշող ապագան:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Գեղորդ Զ-ը Սովետական Հայաստանի 25-ամյա տոնակատարության հանդեսին փոքր ապրելով տոնի հետ կապված ջերմ ու ազ-նիվ զգացումներ՝ հանդեսատարհից հեռա-նալիս սրտագին բացականչեց. «Փառք Աստծո, մեր ժողովուրդը, որ դարեր շարու-նակ հալածված (ու անօգնական էր, սովե-տական կարգերում ամուր թիկունք ու հե-նարան ունի: Ուրախալի է տեսնել, թե ՍՍՌ Միության եղբայրակից ժողովուրդները սուս մեծ ժողովրդի գլխավորությամբ ինչ-պիսի սիրով ու նվիրվածությամբ են շրջա-պատում մեզ: Փառք Աստծո, շնորհիվ սո-վետական կարգերի հայ ժողովուրդը դա-րեթից հետո նորից ձեռք բերեց իր պետա-կանությունը»:

Վեհափառ Կաթողիկոսի այս հակիրճ գնա-հատականը իր մեջ պատռնակում է մեր աղոթի պատմության ճշմարտացի վերլուծու-թյունը:

1945 թվականը նշանակալից էր նաև Հայ Եկեղեցու կյանքում տեղի ունեցած խոշոր իրադարձությամբ. դա 1945 թ. հու-նիսին Ս. Էջմիածնում Ազգային- Եկեղեցա-կան ժողովի գումարումն էր: Հայոց Եկե-ղեցին իր գոյության ամբողջ ընթացքում չէր ունեցել համազգային եկեղեցական ժողովի այնպիսի լրիվ ներկայացուցչական կազմ, ինչպիսին կար այդ ժողովում: Ժողո-վրն իր էությունով դրսևորեց ազգային միասնության և փոխմբռնման գոյությունը: Նրա գործունեությունը նվիրագործվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրու-թյամբ, հոգևոր ճեմարանի բացմամբ և եկեղեցական մի շարք լուրջ ու գործնա-կան որոշումներով:

Նոր տարվա շեմին մենք ականատես եղանք հայ ժողովրդի կյանքում տեղի ու-նեցած մի ավելի խոշոր, քաղաքական-պատմական իրադարձության, ինչպիսին սփյուռքում ցրված տարագիր հայ ժողո-վրդի իր Հայրենիք՝ Սովետական Հայաս-տան վերադառնալու հնարավորությունն է: Ողջ աշխարհին հայտնի է այն պատմական անարդարությունը, որ գործադրվեց 1914 թվին, առաջին համաշխարհային պատե-

րազմի ժամանակ հայ ժողովրդի նկատմամբ: Թուրքիայի կողմից խաղաղ ու աշխատասեր հայ ժողովուրդը տեղահան արվեց, տարագրվեց իր հայրենի օջախից և ստիպված եղավ օտար հորիզոններում հաց ու աշխատանք որոնելու:

Սակայն տարագիր հայ ժողովրդի սրբտուհ երբեք չմարեց Մայր-Հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու անշեջ հուրը: Ամենայն Հայոց Հայրապետի դիմանում բազմաթիվ փաստաթղթեր են կուտակվել հայ ժողովրդի առ հայրենիքն ունեցած անսահման սիրո և նվիրվածության մասին: Սփյուռքում ցրված հայության միակ և բոլոր ցանկությունն է վերադառնալ Հայրենիք, աշխատել հայրենի հողի վրա ու վերականգնել պապական օջախները:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը ելնելով հայ ժողովրդի այս սրտաբուխ ցանկությունից՝ ղեկտեմբեր ամսին երեք մեծ պետությունների՝ ՍՍՌՄ-ի, Ամերիկայի Միացյալ Նահանգների և Մեծ Բրիտանիայի ղեկավարներին ուղղած իր դիմումով խընդրել է լուծել հայ բազմաշարժար ժողովրդի

արյունոտ դատը և հայերին վերադաձնել նրանցից պատմական անարդարության բռնի կերպով խլված հայրենի գյուղերն ու քաղաքները, միացնելով դրանք մեր փառապանծ Հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

ՍՍՌՄ ժողկոմսովետը ընդառաջելով Հայկական ՍՍՌ կառավարության միջնորդությանը, թույլ է տվել սփյուռքում ցրված հայության ներգաղթը Սովետական Հայաստան:

Հուլիսի 1946 թվականը կդառնա Մեր Հայրենիքի՝ Սովետական Հայաստանի ծաղկման նոր վերելքի և հայրենի օջախի շուրջը մեր ժողովրդի համախմբման փառավոր տարի: Մայր Հայրենիք դարձող տարագիր հայ ժողովուրդը մեր կողմից կընդունվի գրկաբաց, անկեղծ և սրտաբուխ սիրով:

Տա Աստված, որ 1946 թվականը դառնա հոյակապ ու պատմական տարի, հայ ժողովրդի համախմբման տարի իր Մայր Հայաստանում:

Ծնորհավոր նոր տարի և ծնունդ:

